

## **Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots»**

### **ծրագրերի» համար ՖՏ 2019.**

#### **«Մեղրի համայնքի մանկապարտեզում արևային էներգիայի համակարգի տեղադրման» և «Ջուջևան գյուղում խմելու ջրի մատակարարման» ծրագրերի ստորագրման արարողությունը**

2019 թ. նոյեմբերի 29-ին, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադան մասնակցեց Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2019) համար դրամաշնորհային աջակցության երկու պայմանագրերի ստորագրման արարողությանը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում: Դեսպան Յամադայից բացի, արարողությանը ներկա էին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ, պարոն Վաչե Տերտեղյանը, «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն, պարոն Հովհաննես Ղազարյանը, «Մեղրի համայնքի մանկապարտեզի» տնօրեն, տիկին Սյուզան Սարգսյանը, «ԶՄՅՈՒՆԻԹԻ ՍԵՆԹՐ ՖՈՐ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպության նախագահ, տիկին Հասմիկ Ազիբեկյանը և ուրիշներ:

Առաջին հերթին, դեսպան Յամադան և Մեղրի համայնքի մանկապարտեզի տնօրեն Սյուզան Սարգսյանը ստորագրեցին «Մեղրի համայնքի մանկապարտեզում արևային էներգիայի համակարգի տեղադրման» ծրագրի դրամաշնորհային պայմանագիրը (51,154 ԱՄՆ դոլար): Ծրագրի նպատակն է Մեղրի համայնքի մանկապարտեզին տրամադրել արևային էներգիայի համակարգ և ջրատաքացուցիչ՝ «Իմ քայլը» հիմնադրամի հետ համատեղ, որն աջակցում է մանկապարտեզի վերանորոգմանը: Արդյունքում, 300 երեխաներ և նրանց ընտանիքներ, ինչպես նաև մանկապարտեզի 47 աշխատակիցներ օգուտ կքաղեն այս ծրագրից:

Երկրորդ հերթին, դեսպան Յամադան և «ԶՄՅՈՒՆԻԹԻ ՍԵՆԹՐ ՖՈՐ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» տարածաշրջանային համագործակցության հասարակական կազմակերպության նախագահ Հասմիկ Ազիբեկյանը ստորագրեցին «Ջուջևան գյուղում խմելու ջրի մատակարարման» ծրագրի դրամաշնորհային պայմանագիրը (68,382 ԱՄՆ դոլար): Ծրագրի նպատակն է կառուցել բնական աղբյուրների ջրհավաք ավազան, տեղակայված Ջուջևան գյուղից 3 կմ հեռավորության վրա, ինչպես նաև ջրագծեր համայնքին ջուր մատակարարելու նպատակով: Դրա օգնությամբ ակնկալվում է բարելավվել սանիտարահիգիենիկ պայմանները Ջուջևան գյուղում, որտեղ բնակվում է 600 բնակիչ՝ այսպիսով նպաստելով մարդկային առողջության պահպանմանը:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ պարոն Տերտեղյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը, ինչպես նաև յուրաքանչյուր կազմակերպության ներկայացուցիչներին՝ իրենց ներդրումի և ակտիվ

մասնակցության համար ուղղված համայնքային զարգացմանը, որը խթանում է կանաչ էներգիան և ենթակառուցվածքների բարելավումը:

Իր հերթին դեսպան Յամադան նշեց, որ Հայաստանի ապագան տեսնում է համայնքային և տարածքային զարգացման մեջ և կրկին շնորհավորեց այս երկու ծրագրերի մեջ ներգրավված բոլոր կողմերին՝ վերջիններիս մաղթելով ծրագրի բարեհաջող ավարտ մոտ ապագայում:

Իրենց հերթին «Իմ քայլը» հիմնադրամի՝ «Մեղրի համայնքի մանկապարտեզում արևային էներգիայի համակարգի տեղադրման» ծրագրի գործընկեր, և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին դեսպան Յամադային նման բացառիկ հնարավորության համար և վստահեցրեցին, որ բոլոր ջանքերը կգործադրվեն ծրագրերի բարեհաջող իրականացման համար:



Դեսպան Յամադան և Մեղրի համայնքի մանկապարտեզի տնօրեն Սյուզան Սարգսյանը



Դեսպան Յամադան և «ԲՄՅՈՒՆԻԹԻ ՍԵՆԹՐ ՓՈՐ ԴԻՎԵԼՈՓՄԵՆՏ» ՀԿ-ի նախագահ Հասմիկ Ազիբեկյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագիրը



ՀՀ ՏԿԵ-ի նախարարի տեղակալ Վաչե Տերտեղյանի ողջույնի խոսքը



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



«Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն Հովհաննես  
Ղազարյանի երախտագիտության խոսքը